

№ 1194

0120-10

ՀԱՅԿԼԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ АЗИИ
Академии Наук
СССР

ՅԵՐԵՎԱՆ - 1928

375
Z-II

Ca 1939

ՀԱՄԷԼ ԼԺԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԼՈՒՍԳԼԵՎԱՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(սկսած 1926 թվից)

1. Ծրագիր հասակավոր կիսագրագետների դպրոցներում և խմբակներում կամայ- լեքային սխտեմով պարապմունքների համար հրատ. 1926 թ. 50 էջ, գինը 30 կ.
2. Խրնիթ-ընթերցարան—ժողովածու, № 2
հրատ. 1926 թ. 90 էջ, գինը 20 կ.
3. Կենդանի գրույց Պետապի մասին—տ- գիտկա 3 մասից, փոխադր. հնկոյանի և Մելիքսեթյանի . . . հրատ. 1926 թ. 56 էջ, գինը 20 կ.
4. Պապի կնունը—պիյես 1 գործ., փո- խադր. եզ. հոգիկի . . . հրատ. 1926 թ. 24 էջ, գինը 15 կ.
5. Վ. Թ.—Հրդեհ—պիյես 3 պատկերով,
հրատ. 1927 թ. 28 էջ, գինը 50 կ.
6. Խրնիթ-ընթերցարան—ժողովածու, № 3
հրատ. 1927 թ. — գինը 1 ռուբ.
7. Ռ. Աբրահամյան և Յեղ. Հասրաթյան— Չեռնարկ տնտեսական աշխարհագրու- թյան և բնագիտության . . . հրատ. 1927 թ. 106 էջ, 80 կ.
8. Մ. Գասպարյան—Մաթեմատիկայի աշ- խատանքի գիրք . . . հրատ. 1927 թ. 136 էջ, գինը 80 կ.
9. Լիկկայանների ծրագիրը—որինակելի դա- սեր և մաթեմատիկական գրագիտու- թյուն հրատ. 1927 թ. 48 էջ, գինը 15 կ.
10. Չափ ու կշիռ մետրական սխտեմի անհրաժեշտությունը . . . հրատ. 1927 թ. 63 էջ. —
11. Վ. Միրաբյան—Մանուշի հարսանիքը, կոոպերատիվ պիյես 3 գործ. 4 պատկ.
հրատ. 1927 թ. 30 էջ, գինը 50 կ.
12. Հակոբյան (յերգարան), տասներկու հեղափոխական խմբերգ. հրատ. 1927 թ. 17 էջ, գինը 35 կ.


375
2-11

ՊՐԱԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



59155-66

I ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթագրագիտության վերացման դպրոցների վերջին տարիների փորձը հայտարարել է մի շարք բացեր և դժվարություններ, փորձեք բղխում են ծրագրի բարդությունից (տես «Ծրագիր հասակավոր կրթագրագետների դպրոցներում և խմբակներում կոմպլեքսային սխեմայով պարապմունքների համար», Յերևան, 1926) :

Քաղաքացիական մեթոդական հանձնաժողովը ինկատի ունենալով այս հանդամանքը, վերամշակել է հիշված ծրագիրը, պարզացրել ու կրճատել քաղաքական-տնտեսական-աշխարհագրական գիտելիքները, փորձեք ծանրարեւոյում էլ ին ծրագիրը և դարձնում այն դժվարամարտ :

Հանձնաժողովը ղեկավարվել է 1927 թ. հունիսի 11-18 տեղի ունեցած անդրագիտության և կրթագրագիտության վերացման համառուտական կոնֆերանսի ընդունված ծրագրով («Программа для школ и кружков по ликвидации малограмотности», издание «Долой неграмотность», Москва, 1927 г.) և մացրել այնտեղ մի շարք փոփոխություններ :

ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՔԱՂԱՌՍԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ

Մեծահասակ բանվորների և գյուղացիների ընդհանուր կրթության սխեմայի մեջ կրթագրագիտության վերացման դպրոցը լիկվայանից հետո առաջին աստիճանն է : Դպրոցի նպատակն է տալ մեծահասակ կրթագրագետին կարգալու, զրելու, հաշվելու, գրքով, լրագրով ու քարտեզով աշխատելու վարժությունների միջոցով, վորն անհրաժեշտ է սոցիալիստական շինարարության խնդիրները հասկանալու և գիտակցորեն ու ակտիվ նրա մեջ մասնակցելու համար : Միաժամանակ կրթագրագետների դպրոցը

պատրաստում է ընդհանուր կրթութեան և հաջորդ աստիճանների համար, փորձեք են՝ մեծահասակների բանվորական և գյուղացիական միամյա դասընթացներ, բարձր տիպի դպրոցներ, բանֆակներ, առաջին աստիճանի կուսակալներ և շրջիկ դպրոցներ։ Կիսապրագիտութեան վերացման դպրոցի ուսուցման ժամանակամիջոցը կարճ լինելով՝ դպրոցն իրեն նպատակ է չի դնում տալ ամփափ մի գիտություն, այլ տալիս է միայն տեխնիկական անհրաժեշտ վարժույթների մի խմբով՝ հենվելով հասարակագիտական և արհեստակցական-կենցաղային բնույթ կրող նյութերի վրա։ Այդ վարժույթները պիտի հասկանալ իբրև գիտելիքներ, վերջին գրագիտութեան ուսուցման հետ միասին խթան են հանդիսանում խորհրդային շինարարութեանն ակտիվ մասնակցելու։

Այս ամենից բխում է դպրոցի հիմնական և կարևորագույն նպատակը—տալ ավարտողին մի կողմից գրելու, հաշվելու և գրքով ու լրագրով աշխատելու վարժույթներ, մյուս կողմից հետագա կրթությունը ինֆուսելու շարունակելու և ստացած վարժույթները ու գիտելիքները առոքյա գործնական, արտադրական և հասարակական աշխատանքի ընթացքում կիրառելու կարողություն։

ՈՎՔԵՐ ՊԵՏԻ ՀԱՄԱՐՎԵՆ ԿԻՍԱԳՐԱԳԵՏ

Մեր յերկրի բանվոր-գյուղացիական ազգաբնակչութեան լայն խավերի տարեցտարի աճող ակտիվութունը՝ բարձրացնելով նրա ընդհանուր կուլտուրական մակարդակը՝ միևնույն ժամանակ բարձրացնում է և նրա գրագիտութեանը։

Համաձայն մեծահասակ բանվորների և գյուղացիների կյանքի ու աշխատանքի պայմանների ծայրահեղ բազմազանութեան անցյալում ու ներկայումս—նրանց գրագիտութեան պատկերն էլ չափազանց խառնաբոյն է։ Ու յեթե քիչ թե չափ հեշտ էր վերջին աշն կոնսիդերենտը, վերջ պիտի սովորեր լիկկայաններում, ապա չափավոր դժվար է սահմանել, թե վերջ և կիսապրագիտների դպրոցներում սովորողների հիմնական կոնսիդերենտը։ Այս հարցի լուծումից և կախված նախ և առաջ դպրոցի ընդհանուր նկարագիրը, ապա և ծրագրի ներքին ու արտաքին լուսնոգիտութեանը։

Վերև հիշված անգրագիտութեան և կիսապրագիտութեան վերացման համառոտական կոնֆերանսը այդ հարցի նկատմամբ հետևյալ ուղիք վորոշումն է կայացրել։

Կիսապրագիտութեան վերացման դպրոցներում սովորողներին հիմնական կողքը կազմում են նրանք, ովքեր ավարտում են լիկկայանները կամ էլ ունեն նման պատրաստութուն (վերջիններիս թվին պատկանում են ինքնուսուցող և նրանք, ովքեր չեն վերջացրել տարրական դպրոց կամ վերջացրել են վաղուց ու կորցրել կարգույն, զրելու և հաշվելու վարժույթները)։

Կիսապրագիտների ալոորինակ կողքը թելադրվում է և այն քաղաքական չրջապատով, ուր տեղի չեն ունենում կիսապրագիտութեան վերացման մասնաբաժան աշխատանքը։ Չմոռանանք, վերջույնում կիսապրագիտների հիմնական մասնան կազմում են չքավորներն ու բաղնիքները։ Ազգաբնակչութեան այս խավերի տեխնիկական թերի գրագիտութեանը խոչընդոտ է հանդիսանում նրանց համար՝ ակտիվ մասնակցելու սոցիալիստական շինարարութեան։ Կիսապրագիտների դպրոցի առաջնակարգ խնդիրն է—վերացնել այդ խոչընդոտները։

ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ ՄԱՍԻՆ

Սույն ծրագիրը կազմած է չորս ամսվա համար, ինչպիսի ունենալով հողագործական աշխատանքների սկիզբն ու վերջը և հաշվելով ուսման ժամանակամիջոցը հոկտեմբերից կամ նոյեմբերից մինչև փետրվարը կամ մարտը։ Չհաշվելով հեղափոխական տոները, հանդստան օրերը և անխուսափելիորեն բաց թողած օրերը՝ հիշված ժամանակամիջոցը, ինչպես ցույց է տվել փորձը, ունենում է միջին թվով 180—ից մինչև 190 փառական դասաժամ, հաշվելով չարաթական 2 դասից բաղկացած 6 պարապմունք։

ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի բովանդակությունը վորոշվում է կիսապրագիտութեան վերացման դպրոցի խնդիրներով, դպրոցում սովորողների հիմնական կոնսիդերենտի գրագիտութեան մակարդակով, և ուսուցման ժամանակամիջոցով։

Ծրագիրը պարունակում է խորհրդային շինարարութեան ամենապարեմ հարցերը և բաժանված է հետևյալ չորս հատվածների։

«Անհրաժեշտ է բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը» (առաջին հատված)։

«Անհրաժեշտ է ամրացնել խոշոր արդյունաբերությունը, վորը անցիալիզմի հիմքն է» (յերկրորդ հատված) :

«Անհրաժեշտ է ամրացնել խոքիրդային իշխանությունը, վորը գյուղացիական մասսաների ղեկավար բանվոր դասակարգի իշխանությունն է» (յերրորդ հատված) :

«Անհրաժեշտ է ամրացնել հարկիրդային Միությունը, վորը ամբողջ աշխարհի աշխատավորների հեղափոխական շարժումն է» (չորրորդ հատված) :

Չորս հատվածների անունները ցույց են տալիս ամեն մի հատվածում պարունակվող թեմաների և յենթաթեմաների նպատակը :

Հատվածների ազդրինակ ձևակերպումը գյուղացնում է առանձին հարցերի մշակումը և հեղատացնում ուսանողներին պարզելու այն հիմնական մտքերը, վոր արտահայտվում են հատվածների անուններում :

Առանձին ամփոփ հատվածները, բացի նրանից վոր ճշտում են ծրագրին վերաբերվող հարցերի նպատակային իմաստը, ուսումնական ժամանակամիջոցի ընթացքում հեղատացնում են նաև աշխատանքի պարբերական հաշվառումը :

Ամեն մի հատված պարունակում է 3-ից մինչև 4 թեմա, վորոնք իրենց հերթին բաժանվում են 2-ից մինչև 5 յենթաթեմայի :

Ծրագրերը պարունակում է ընդամենը 27 հարց, ամեն մի հարցին տրվում է 1-5 պարապմունք : Ամեն մի հարց ունի իր մեջ իր պատասխանը : Հարցի լուծանդակությունը ցույց է տալիս, թե ինչպես պիտի լուսաբանել և ինչ ծավալով պիտի մշակել այն :

Ծրագրիս կենտրոնական հարցը գյուղատնտեսությունն է, վորի մասին խոսվում է առաջին հատվածում : Այս հատվածի թեմաների մշակումը հիմնական գիտելիքներ պիտի տա այն մասին, թե ինչ միջոցներ և ձևեր անում և ինչ քաղաքականություն ունի կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը գյուղատնտեսությունը բարձրացնելու ասպարիզում : Այս հատվածում առանձին ուշադրություն պիտի դարձնել յերկրորդ և հինգերորդ թեմաների վրա, ուր խոսվում է բերքի բարձրացման ու գյուղատնտեսության կոոպերացման ու մեքենայացման մասին, վորովհետև սրանք են կազմում գյուղատնտեսության վերաշինության հիմքը անցիալիստական սկզբունքների վրա :

Ինչ վերաբերում է յերրորդ թեմային, վոր կոչվում է «Զարգանում են գյուղատնտեսությունն և այլ ճյուղերը», ապա այստեղ

մանրամասնորեն հարկավոր է մշակել միայն այն հարցերը, վոր հապաված են տվյալ տեղում տարածված գյուղատնտեսության վրին և ճյուղի հետ, ինչպես որինակ կենդանաբուծություն կամ ել տեխնիկական կուլտուրայի մշակում : Հակառակ դեպքում այս թեման մշակվում է միայն ընդհանուր գծերով :

Առաջին հատվածի առաջին թեման («Նոր կյանք ենք կառուցում»), ներածական բնույթ է կրում ամբողջ ծրագրի նկատմամբ : Այս թեման մշակելիս հարկավոր է լուսաբանել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, վորոնք ազատել են գյուղացիներին ցարական-պամեչիկական լծից և հնարավորություն տվել նրանց մասնակցելու նոր կյանքի շինարարության : Այստեղ, վորեւ առաջավոր գյուղի որինակի վրա, պետք է ցույց տալ նոր կյանքի կոնկրետ ձևերը, ինչպես որինակ տնտեսության նոր ձևեր, գյուղի կուլտուրական աճումը, գյուղացիության լայն խավերի մասնակցությունը խորհրդի կամ ել կոոպերացիայի աշխատանքին և այլն :

Յերկրորդ արդյունաբերության վերաբերվող հատվածում, առանձին ուշադրություն է հարկավոր դարձնել առաջին թեմայի և յերկրորդ թեմայի առաջին յենթաթեմայի վրա, այն է—«Նոր Փարիկներ և զավոդներ ենք կառուցում ու վերասարքավորում հները» ու «Բանվորի աշխատանքը ծանր է արտադրության պրոցեսում» : Առաջին թեման մշակելիս հարկավոր է—յերնելով քաղաքի և գյուղի զոգման ամբացման ու գյուղատնտեսության բարձրացման տեսական տեսիքից—ընդգծել յերկրի ինդուստրացման նշանակությունը : Հարկավոր է ընդգծել սրանից բխող մի անհրաժեշտություն ևս, այն է, վոր գյուղի շքավորների և միջակների լայն խավերը պետք է մասնակցեն ու ոգնեն պետությանն այն ամենում, ինչ ձեռնարկվում է յերկրի ինդուստրացման համար : «Ինչ է տալիս գյուղը քաղաքին» և «Ինչ է տալիս քաղաքը գյուղին» թեմաները պարզում են տնտեսական կապի կոնկրետ ձևերը և ցույց տալիս քաղաքի և գյուղի զոգման ամբացման և խորացման ուղիները :

Յերկրորդ թեմայի առաջին յենթաթեմայում կարևոր է պարզել բանվորի աշխատանքի պայմանները արտադրության ընթացքում :

Այս հարցը անհրաժեշտ է լուսաբանել փաստերի հիման վրա՝ պատգարծելով հնարավորության դեպքում եքսկուրսիաների արված նյութը կամ ել բանվորների աշխատանքի պայմանները նկատագրող հաջող գեղարվեստական հատվածները :

Ծրագրի 3-րդ մասը լուսարանում և խորհրդային շինարարության հարցերը: Այստեղ ընդգծված են Հայաստանի, Անդրկովկասյան Ֆեդերացիայի ու Միության սահմանադրությունների կարևորագույն կողմերը, վերոնշյալ ապահովում են բոլոր ազգութայինների աշխատավորների իրավունքը՝ մասնակցել պետական գործերում:

Այս հատվածի թեմաների մշակման ընթացքում կարևոր և արժարժեքի աչքի առնվող, վեր տեղական խորհրդի աշխատանքը կարելի չէ դնել լավ հիմքերի վրա ու կենտրոնական իշխանության ձեռնարկած միջոցների կիրառումը կյանքի մեջ ապահովել միայն այն դեպքում, յետև չքավորները, բատրակներն ու միջակները մասնակցեն տեղական խորհրդի աշխատանքներին, և գյուղացիության լայն խավերն ամեն կերպ պաշտպանեն խորհրդային իշխանությունը: Այս հատվածի յերրորդ թեման՝ «Խորհրդային իշխանությունը միացնում է բոլոր ազգութայինների աշխատավորներին մի յեղրայրական միության մեջ» լուսարանում և կուսակցության ու խորհրդային իշխանության քաղաքականությունն ազգային հարցի բնագավառում: Ազգերի սերտ յեղրայրական միության անհրաժեշտությունը խորհրդային շինարարության գործում պետք է ցույց տալ այլ և այլ ազգության պատկանող բանվորների և գյուղացիների կյանքի ու կենցաղի սրբնակով:

Ծրագրի չորրորդ հատվածը, հակադրելով Խ.Ս.Հ.Մ.-ն կապիտալիստական աշխարհին, պետք տա ընդհանուր տեղեկություններ նրանց փոխհարաբերություններին մասին ու պարզի Խորհրդային Միության նշանակությունն այն պայքարի մեջ, վերը մղում են ուրիշ յերկիրների բանվորությունն ու գյուղացիությունը կապիտալիստների և կալվածատերերի լծից ազատագրվելու համար:

Նախկին ծրագրի քաղաքական-տնտեսական-աշխարհադրական թեքումն աչքի առնելով հանվում է և ուշագրություն կենտրոնացվում Խ.Ս.Հ.Մ.-ի և կապիտալիստական յերկիրների փոխհարաբերությունների ընդհանուր գծի լուսարանման վրա: Այս հատվածի թեմաների մշակման ընթացքում յետևել պետք է ընդունել միջազգային կարևորագույն ընթացիկ դեպքերն ու հիմնվելով նրանց վրա՝ սրբել կապիտալիստական քաղաքականության ու բանվոր դասակարգի ազատագրական պայքարի էությունը:

Առաջին թեմայի չորրորդ յենթաթեմայում, վերը կոչվում է «Բուրժուական յերկիրները Խ.Ս.Հ.Մ.-ի նկատմամբ թշնամական քաղաքականություն են վարում», անհրաժեշտ է նաև պարզել պա-

տերազմի վտանգի յնդկրներն ու սրանից բխող ազգաբնակչության յայն յայն յառվերի պատերազմին պատրաստելու հարցը, ապա և մեր սոցիալիստական շինարարության ու բանվորների և գյուղացիների միության ավելի ու ավելի ամրացման անհրաժեշտությունը:

Ծրագրի թեմաների բովանդակությունը կառուցված է կոմպլեքսային սխեմայով: Հարցերը արծարծվում են գլխավորապես հասարակադիսական և արտադրական-կենցաղային տեսակետներից, իսկ բնագիտական տարրական տեղեկություններ տրվում են միայն այն ժամանակ, յերը նրանք կապվում են թեմաների հիմնական բովանդակության հետ (տես առաջին հատվածի թեմաները, II թեմա, 2-րդ յենթաթեմա. յերրորդ հատվածում—III թեմա, 1-ն և 2-րդ յենթաթեմաները):

Թեմաների բովանդակության ծավալն այնքան է, վեր միանգամայն ապահովվում է վարժույթների յուրացման համար անհրաժեշտ ժամերի քանակը:

Հասարակական-քաղաքական հարցերի պարզարանման ուսման ընդհանուր ժամանակից պետք է հատկացնել փոշ ավելի, քան 10-15%: Մնացած ժամանակը պետք է հատկացվի տեխնիկական վարժույթներին:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

Ծրագրեր պարունակում է յեղվի, հաշվի, քարտեզի, գրքով և յրազրով աշխատելու տեխնիկական վարժույթների անհրաժեշտ միջոցում, վեր մշակվում են կոմպլեքս թեմաների հիման վրա: Հասկանալի չէ միանգամայն, վեր տեխնիկական վարժույթները կարելի չէ ու անհրաժեշտ է մշակել՝ հիմնվելով և այն յրացուցիչ նյութի վրա, վեր տալիս է ուսանողների արհեստակցական-կենցաղային կյանքը, մի պայմանով միայն, վեր այդ նյութը մտաշնչի ու հետաքրքիր յնրի մեծահասակ կիսադրագետին:

Լեզվի վարժույթներից նախատեսված են միայն այն վարժույթները, վերոնշյալ հնարավորություն կտան կիսադրագիտության վերացման գպրոցն ավարտողին կարդալ ու հասկանալ հոնրամտչի գիրք ու յրագիր, և յարագրել պարզ գործնական գրություններ, վերոնշյալ կարևոր են գյուղացու ու բանվորի առոյրյա կյանքում:

Լեզվի վարժույթները բաժանված են հետևյալ յոմթյակներին.

1. Կարգալու վարժույթներ .
2. Աշխատանք գրքով ու լրագրով .
3. Բանավոր լեզվի զարգացումը .
4. Ուղղադրություն .
5. Գրավոր լեզվի զարգացումը :

Ուղղադրության մեջ մտնում են միմիայն միջնակարգական վարժություններ : Կիսադրադականների դպրոցը ձգտում է դարձնել դերը վոչ թե կատարելապես անտալ, այլ միայն դյուրընթեռնելի : Այդ պատճառով ծրագրի մեջ մտցրած են միայն այն ուղղադրական վարժույթները, վորոնք նպաստում են խնդրիս լուծմանը (տես ուղղադրության վարժույթների ծավալը) :

Հաշվի նկատմամբ կիսադրադականների դպրոցն ամբարտաճ պիտի կարողանա կատարել ամբողջ թվերի չորս թվաբանական գործողություններն ու կիրառել նրանց առօրյա գործնական կյանքում :

Թվաբանական վարժույթների համար նյութ է ծառայում մի կողմից թեմաների կոմպլեքս բովանդակությունը, մյուս կողմից թվական այն լրացուցիչ տվյալները, վորոնց տալիս է ուսանողին չբնականող կյանքը : Հաշվի նկատմամբ դպրոցի հիմնական խնդիրն այն է, վոր կիսադրադական կարողանա հասկանալ գրքի ու լրագրի թվական տվյալները, տարրական հաշվետվություններն ու նախահաշիվներն, ապա և ինքնուրույն կատարել իր տնտեսությունն ու հասարակական աշխատանքին վերաբերող հաշիվները :

Մեծերական չափերին ուսանողը ծանոթանում է ամբողջ դասընթացի ընթացքում : Տասնորդական կոտորակներից և տոկոսներից պետք է անցնել միայն տարրական մասերը : Հասարակ կոտորակների մասին տրվում է միայն տարրական հասկացություն :

Ծրագրի մեջ մտցրած է նաև քարտեզով աշխատելու տարրական վարժույթներ : Այս վարժույթները հնարավորություն են տալիս պարզ պատկեր ունենալ մեր ժողովրդական տնտեսության և ուրիշ յերկիրների մասին, ու ատանձնապես անհրաժեշտ են լրագրի հասկանալու համար :

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

Դասատաների աշխատանքը դյուրացնելու և ծրագրին ավելի ևս պարզացնելու նկատառումներով վերև հիշած ամբողջ նյութը բաժանված է թեմաների և պարագմունքների :

Ամեն մի թեմա հայտնաբերվում է իր յենթաթեմաների և որանց կոնկրետ բովանդակությամբ միջոցով (տես ստումնական պլանը) :

Ամբողջ ծրագիրը պիտի մշակվի 2 դասից բաղկացած 96 պարագմունքի ընթացքում : Ամեն մի պարագմունքն ունի մոտավորապես հետևյալ պլանը .

10 բույս տրվում է թեմայի բովանդակությունը պարզարանելուն (ուսանողն ինքը պիտի մշակի թեման, հիմնվելով իր փորձի և ուսուցչի ասածների վրա), 40 բույս տրվում է լեզվին, 25 բույս՝ թվաբանության ու 15 բույս՝ քարտեզով, գրքով ու լրագրով աշխատելուն :

ԱՆԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սույն ստումնական պլանը վերջնական բնույթ չի կրում : Ի նկատի ունենալով աշխատանքի տեղական պայմանները (գավառագիտական ստանձնահատկությունները, խմբակների կազմը և աստի, հասակի, զբաղիտության աստիճանի) հարկավոր է նրան համապատասխան վերամշակման յենթարկել թե ևստ բովանդակության և թե վարժույթների : Թեմաների մշակման յելակետ պիտի ծառայի տեղական տվյալները և ուսանողների փորձը : Ուսումնական պլանի թեմաների և յենթաթեմաների բովանդակության մեկնաբանության սկզբում տրվում են այնպիսի հարցեր, վորոնք ցույց են տալիս ուսուցչին տեղական պայմանների և ուսանողների փորձի ոգտագործման անհրաժեշտություն և գրանով մոտենցում բնդհանուրին մասնավորի, իսկ անծանոթին ծանոթի միջոցով : Այսպես որինակ, առաջին հատվածի յերկրորդ թեմայի առաջին յենթաթեման, վորը կոչվում է «Հողաշինարարություն ևնք կատարում և անցնում սերմափոխության» սկսվում է այսպես . «Հողդատագործումը և ցանքսափոխությունը տվյալ վայրում» : Կամ և յերրորդ հատվածի առաջին թեման—«Տեղական խորհուրդներն իրագործում են սոցիալիստական շինարարության խնդիրները»—նրանով է սկսվում, թե ինչպես է աշխատում տեղական խորհուրդը : Ընդհանուր հարցերի հետ սերտ կապված տեղական տվյալները մտցրած են ամբողջ ծրագրի մեջ :

Ուսումնական պլանի առանձին թեմաները հարկավոր է խորացնել ու մանրամասնել՝ յելակետ ընդունելով այն, թե փորքան և ուսանողները հետաքրքրվում տվյալ թեմայով, կամ և յերրորդ ևն :

նրա մեջ բուսարանի մեջ հարցերը համապատասխանում տեղական պայմաններին :

Այսպես որինակ , առաջին հատվածի յերրորդ թեմայի—«Ձառ-
գանում են գյուղատնտեսությունը և այլ ճյուղերը»—զանազան մա-
սերը մշակվում են միջ հայաստան մանրամասնությամբ : Կենդանա-
բուծական շրջաններում մանրամասնորեն մշակվում է կենդանա-
բուծությունը , իսկ գյուղատնտեսության այլ ճյուղերին ծանո-
թացնում են միայն ընդհանուր դեպքում : Այն վայրերում , վարակ
զարգացած է տեխնիկական կուլտուրայի մշակումը , անհրաժեշտ
է մանրամասնորեն կանգ առնել տնտեսության այլ ճյուղի վրա ,
իսկ մնացածի վրա , ընդհանրապես , պակաս ուշադրություն դար-
ձնել և այլն :

Ուսումնական պլանում վարժույթները բաշխված են վերջ
կարգում ու կցած յենթաթեմաներին : Գործնականում հնարավոր
է միշտ այս հաջորդականությունը պահպանել :

Մտալոր բաշխումն , այնուամենայնիվ , անհրաժեշտ է , վո-
րովհետև նա մի կողմից ցույց է տալիս ուսուցչին կամպլեքս նյու-
թի հիման վրա մշակվելիք վարժույթների նպատակը , իսկ մյուս
կողմից պարզում , թե տվյալ վարժույթի ամրացումը մոտավորա-
պես քանի որինակ է պահանջում : Այս հանգամանքների վրա
ուսուցչից առանձին ուշադրություն պիտի դարձնել : Այս կամ այն
վարժույթի տեղադրումը միանգամայն հնարավոր է և անհրա-
ժեշտ ու կախված է տվյալ խմբակի դրագիտության աստիճանից և
հառաջադիմությունից :

Կրթագրագետների դպրոցի աշխատանքի հաջողությունը մի-
այն ծրագրից չէ կախված : Կարևոր նշանակություն ունին ծրա-
գրային նյութի մշակման մեթոդները :

Մանկավարժական պրոցեսի սկզբունքներից մեկն մտան
մենք արդեն վերև խոսել ենք—զա տեղական տվյալների ու ուսու-
նողների փորձի ոգտագործումն է , վորոնք ավանդույթ դարձնում
են կոնկրետ և ակնհայտ :

Կրթագրագետների դպրոցների ավանդման հիմնական պակա-
սությունն այն է , վոր այնտեղ գերիշխում է բանավոր մեթոդը :

Ուսուցչից հրամցնում է ուսանողներին «բանավոր ճշմարտո-
թյուններ» , կամ էլ առաջարկում է նրանց կարգալ պատմվածք ,
գրել վորեւե նախագատություն կամ էլ լուծել թվարանական որ-
նակներ՝ միանգամայն ինկատի չառնելով մեծահասակի հետա-
քրթությունն ու պահանջները : Ընդհանրապես ամեն ինչ կախված

է ուսուցչից : Ուսանողները հաճախ մեքենայորեն կատարում են
այն ամենը , ինչ առաջարկում է ուսուցչից : Արդյունակ ավանդ-
ման հետևանքով վարժույթները յուրացվում են դժվարությամբ
և անկայուն :

Մեթոդիկայի հիմնական պահանջներն են .

1. Պետք է ավանդել՝ հիմնվելով կոնկրետ նյութի վրա : Նորը
պետք է կապվի ուսանողի փորձի , գիտեցածի և յուրացրածի հետ :
Նորը պետք է ողնի ավելի ճիշտ հասկանալու այն , ինչ արդեն
հայտնի չէ նրան , պետք է ճշտի ու կարգավորի մեծահասակ բան-
վորի և գյուղացու փորձը :

2. Նոր ստացված վարժույթն ուսանողը պետք է ինքնուրույն
կերպով մշակի , յերը նրա տեսողությամբ , լսողությամբ ու մկտն-
ները թարմ են :

3. Այն ամենը , ինչ ստացվում է ու մշակվում , իսկույն եեթ
պիտի կիրառվի գործնական կյանքում :

Վարժույթները կարող են կայուն կերպով յուրացվել այս յե-
րեք աստիճանն անցնելուց հետո միայն :

Հետևապես , բավական չէ լավ պատմել կամ էլ կարդալու ու
գրելու նյութը տալ ըստ թեմայի . հարկավոր է զարթեցնել ակտի-
վություն և քննադատական վերաբերմունք ևս : Հարկավոր է հնա-
րավորություն տալ , վոր նոր ստացածը ամրացվի մի շարք վար-
ժույթներում : Կյանքում կիրառելով միայն կարելի կլինի ոտու-
ղել , թե ուսանողը վորքան է յուրացրել տվյալ վարժույթը :

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՈՒՍՈՒՑԶԻ ՅԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս ծրագրերը մշակելու համար հարվակոր է ոգտագործել հե-
տեյալ գրքերը . 1) Մ . Գասպարյանի «Հայերենի աշխատանքի գիր-
քը» , Յերևան , 1928 թ . , 2) Թիեռույն հեղինակի «Մաթեմատիկայի
աշխատանքի գիրքը» , Յերևան , 1927 թ . ու 3) Ռ . Արթուրյանի և
ՅԼ . Հարությունի «Տնտեսական աշխարհագրությունը» , Յերևան ,
1927 թ . : Հայերենի գիրքն ունի միեռույն հաջորդականությունը ,
ինչ և ծրագրերը : Ժամերի ընդհանուր թիվը և նյութերի բաշխումն
ըստ պարագմունքների համարյա նույնն է և՛ ծրագրում , և՛ գա-
սագրում : Այս ծրագրերը հարմարեցրած և և մաթեմատիկայի գրք-
րին : Թեև նյութը բաշխելիս ինկատի չեն ունեցել 96 ժամ , բայց
հարկ չկա՞նք զեղքում կարելի չէ վորոչ չեղումներ անել :

Բացի այս յերեք հիմնական դրբերից հարկավոր է ոգտագործել և լրացուցիչ գրականություն—«Մանկալ» և «Ախանդարզ» լրագիրները, «Հայաստանի Աշխատավորուհի» շաբաթաթերթը, հանրամատչելի գրքեր գյուղատնտեսություն մասին և այլն: Թվական սովյալները, սքեմաները, քարտեզները և այլն սովելի հարժար և վերցնել հենց այս լրացուցիչ աղբյուրներից, վորովհետև գրանով նւսանողը կհմտանա գրքից և լրագրից ոգտվելու տարտարիցում:

Ուսուցիչներին հանձնարարվում է ոգտվել հետեյալ աղբյուրներից.

1. «Որճիթ—ընթերցարան ժողովածու», № № 1, 2, 3:
2. «Մեթոդական ժողովածու», 1925 թ., Բ. տպագրություն:
3. «Լիկկայանների ծրագիր (որինակելի դասեր և մտթեմանախկական գրագիտություն)», Յերևան, 1927 թ.:
4. «Հրահանգչական նամակներ», № № 1 և 2:
5. «Ժողովրդական Լուսավորություն»—ամսաթերթ, Յերևան:

II ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՐԴԱԲԱՐ ՄՇԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ

(96 պարագումով)

I ՀԱՏՎԱԾ (31 պարագումով)

Անհրաժեշտ է քարճրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը:

I քեմա. Նոր կյանք ենք կառուցում (5 պարագում.):

II քեմա. Հողագործությունը բարելավվում է.

1 յեմքաքեմա. Հողաշինարարություն ենք կատարում և անցնում սերմավորություն (4 պարագում.):

2 յեմքաքեմա. Պարարտացրած հողը և բնորոյի հացահատիկը բարճրացնում են բերքը (4 պարագում.):

III քեմա. Գյուղատնտեսություն մյուս հյուղերն էլ են գարգանում (5 պարագում.):

IV քեմա. Ուրհրդային տնտեսությունները, ցուցադրական դաշտերը և գյուղատնտեսական խմբակներն ոգնում են մտցնել գյուղատնտեսություն մեք նոր ձևեր (3 պարագում.):

V քեմա. Կոոպերացիան այն զլխավոր ուղին է, վորք տանում է գյուղացու տնտեսությունը դեպի սոցիալիզմ:

1 յեմքաքեմա. Կոոպերացիան հնարավորություն է տալիս մեքենաներ ձեռք բերել (4 պարագում.):

2 յեմքաքեմա. Վարկային կոոպերացիայի փոխառությունն ոգնում է գյուղացուն բարճրացնելու իր տնտեսությունը (2 պարագում.):

3 յեմքաքեմա. Կոոպերացիան բավարարում է գյուղացու սպառողական կարիքները (1 պարագում.):

4 յեմքաքեմա. Կոլլեկտիվ տնտեսություններն ու կոմունաները բարելավում են գյուղացու տնտեսությունը (3 պարագում.):

II ՀԱՏՎԱԾ (21 պարագումով)

Անհրաժեշտ է ամրացնել խոշոր արդյունաբերությունը, վորք սոցիալիզմի հիմքն է:

I քեմա. Նոր ֆարրիկներ և զավոգներ ենք կառուցում ու վերասարքավորում հները:

1 յեմքաքեմա. Գյուղը տալիս է քաղաքին սննդի և արդյունաբերություն համար անհրաժեշտ մթերքներ և հում նյութեր (2 պարագում.):

2 յեմքաքեմա. Քաղաքը տալիս է գյուղին իր արդյունաբերության արտադրանքները (2 պարագում.):

3 յեմքաքեմա. Մեր արդյունաբերություն հիմքն են մետաղն ու վառելիքը (5 պարագում.):

4 յեմքաքեմա. Նոր ֆարրիկներ և զավոգներ ենք կառուցում ու վերասարքավորում հները (5 պարագում.):

5 յեմքաքեմա. Ելեկտրոֆիկացիան բարճրացնում է թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը (3 պարագում.):

II քեմա. Արհմիությունները կոմունիզմի դպրոցն են:

1 յեմքաքեմա. Բանվորի աշխատանքը ծանր է արտագրություն պրոցեսում (1 պարագում.):

2 յեմքաքեմա. Արհմիությունները պաշտպանում են բանվորի աշխատանքը, նպաստում, վոր մասսաները մասնակցեն սոցիալիստական շինարարության և աշխույսում արդյունաբերության բարճրացման (3 պարագում.):

III ՀԱՏՎԱԾ (22 պարագրաֆ)

Անհրաժեշտ է ամրացնել հոբիրդային իշխանությունը, վարը գլխավորապես մասնակցի ղեկավար բանվոր դատակարգի իշխանությունն է:

I քեմա. Տեղական խորհուրդներն իրագործում են սոցիալիստական շինարարության խնդիրները (8 պարագրաֆ):

II քեմա. Խորհրդային իշխանության կառուցվածքը հնարավորագրվում է տալիս աշխատավորներին մասնակցել պետական գործերին (6 պարագրաֆ):

III քեմա. Խորհրդային իշխանությունը միացնում է զանազան ազգությունների աշխատավորներին մի յեղբայրական միություն:

1. Ենթաքեմա. Խորհրդային Միության մեջ բոլոր ազգությունները հավասար իրավունքներ ունեն (5 պարագրաֆ):
2. Ենթաքեմա. Անդրկովկասը կազմված է յերեք անկախ հանրապետություններից, վերոնց մեջ մտնում են հինգ ինքնավար շրջան: Խորհրդային Միությանը կազմված է մեկ անկախ հանրապետություններից (3 պարագրաֆ):

IV ՀԱՏՎԱԾ (22 պարագրաֆ)

Անհրաժեշտ է ամրացնել հոբիրդային Միությունը, վարը ամբողջ աշխարհի աշխատավորների հեռախոսն է:

I քեմա. ԽՍՀՄ-ն աշխատավորների միակ հանրապետությունն է ամբողջ աշխարհում:

1. Ենթաքեմա. Բուրժուական ամենագլխավոր յերկիրներում արդյունաբերությունը խիստ զարգացած է (3 պարագրաֆ):
2. Ենթաքեմա. Բուրժուական յերկիրներում իշխանությունը գտնվում է կապիտալիստների և կալվածատերերի ձեռքում (3 պարագրաֆ):
3. Ենթաքեմա. Բուրժուական յերկիրներն ամենազամանկեբայով շահագործում են և ճնշում իրենց զաղույթների ազդեցականությունը (3 պարագրաֆ):
4. Ենթաքեմա. Բուրժուական յերկիրները ԽՍՀՄ-ի նրա հատմամբ թշնամական քաղաքականություն են մարում:

Մեր հարեան պետությունները (Պարսկաստան և Տաճկաստան) (3 պարագրաֆ):

5. Ենթաքեմա. Արտաքին առևտրի մենաշնորհը սոցիալիստական շինարարության հիմքերից մեկն է (2 պարագրաֆ):

II քեմա. Կարմիր Բանակը Միության պահակն է (5 պարագրաֆ):

III քեմա. ԽՍՀՄ-ն ամբողջ աշխարհի աշխատավորների հենաբանն է (3 պարագրաֆ):

ՄՇԱԿՎՈՂ ՎԱՐԺՈՒՅՑՈՒՆԵՐԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ

ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարգալու վարժույթները

1. Փոքրիկ հողվածի կարճ ասույթներ (նախադասություններ, խոսքեր) դանդաղ ընթերցանություն. յուրաքանչյուր վանկի ու բառի պարզ առոգանություն:
2. Ասույթի վերջում ու վերջակետի վրա կանգ առնել ու ձայնն իջեցնել:
3. Հարցական ասույթի արտասանությունը:
4. Պարզ պատկերացնել կարդացածի հիմնական միտքը:


Աշխատանք գրքով ու լրագրով

1. Ծանոթություն դրքի անվան (հեղինակ, հրատարակություն, գիրք):
2. Ցանկի ոգնությունը դադարաբար կազմել դրքի ներքին բովանդակության մասին:
3. Ցանկի ոգնությունը գտնել հարկավոր հոդվածը:
4. Բառարանից ոգտվելու հմտություն:
5. Ծանոթություն տեղական լրագրին (անուն, թիվ, հասցե, խմբագրություն):
6. Լրագրի «ինչ կա այսօր համարում» վերնագրի միջոցով ծանոթանալ նրա բովանդակությանը:
7. Ծանոթություն լրագրի գլխավոր բաժիններին:

Բանավոր լեզվի զարգացումը

1. Հարցերի կարճ ու կոնկրետ պատասխաններ մշակված թեմայի կամ կարդացածի շուրջը:

ВНЕШНЯЯ
ИНСТИТУТА
ДОСТОПОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



2. Կարճ պատմվածքներ ասորյա կյանքի, կենցաղի և արտադրության շուրջը:

3. Կարգացածի հիմնական մտքի ամփոփում:

Ուղղագրութուն

1. Վերջակետի գործածությունը: Մեծատառը գրության սկզբում, վերջակետից հետո և հատուկ անունների մեջ:

2. Առողջանություն նշանները (հարցական, բացականչական, շեշտ):

3. Գաղափար բառի և վանկի մասին: Հնչյուն և գիր: Ձայնավոր, բաղաձայն և յերկձայն: Վանկատում և տողադարձ:

4. Յերկձայնների ուղղագրությունը (այ, ոյ, էյ, ույ և յա, յեյ, յո, յի):

5. Հոգնակիի վերջավորությունները (եր և ներ):

6. «բորդ» և «երորդ» մասնիկներով բառերի ուղղագրությունը

7. «աց» և «ած» վերջավորությունների ուղղագրությունը:

8. Ոժանդակ բայերի առանձին գրելը:

9. Ստորակետի գործածությունը գլխավոր դեպքերը:

Գրավորի վարժույթները

1. Մշակված կարճ ասույթների և հատվածների արտագրություն:

2. Հարցեր մշակել կարգացածի կամ թեմայի շուրջն ու նրանց պատասխանները գրի առնել տետրերում. նույնը կատարել և կարճ անկետի նկատմամբ (յերկու դեպքում ել աշխատանքը կատարել կոլլեկտիվ՝ նախապես գրի առնելով գրատախտակի վրա):

3. Տվյալ բառերից ասույթ կազմել (կոլլեկտիվ):

4. Կարգացածի կամ թեմայի շուրջը մշակված հարցերի պատասխանները ինքնուրույն կերպով գրի առնել (կարճ ասույթներով). նույնը կատարել և անկետի նկատմամբ:

5. Նախապես պլան մշակել հարցերի ձևով ու համաձայն պլանի կազմել և գրի առնել փոքրիկ պատմվածք:

6. Տվյալ բառերից կազմել փոքրիկ պատմվածք (կոլլեկտիվ):

7. Ինքնուրույն կերպով կազմել՝ հայտարարություններ, հավասարմադրեր, ստացականներ և նամակներ:

Մաքեմատիկան կիսագրագետների դպրոցներում

Յերկնիշ թվերը և հոմեական թվանշանները գրել և կարգաւ Հաշիվներ հարյուրավորի շրջանում տասնյակներով:

Յեռանիշ ու քառանիշ թվեր կարգաւ ու գրել:

Ամբողջի պարզ մասերը ($\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$):

Ամբողջի հարյուրերորդական մասերը:

Մասերի և տոկոսների համեմատությունը:

Դրական և բացասական թվեր:

Ժամանակի վերաբերյալ հաշիվներ:

Ծանոթութուն. Սա լիկկայաններում անցածի կրկնությունն է: Նայած սովորողների պատրաստության այդ մասը կարելի չէ սեղմել՝ ծրագրում նշած 18 դասի փոխարեն ավելի քիչ դասեր հատկացնել:

Ամեն մեծությունը բազմանիշ թվեր կարգաւ ու գրել:

Շրջանաձև և ուղղանկյուն դիագրամ կարգաւ ու կազմել:

Տարածության չափումը մասշտաբով. դժեւ հասակագիծ:

Մեծ թվերի դումարումն ու հանումը և այդ գործողությունների ստուգումը:

Գումարման ու հանման ճիշտ ու կրճատ ձևերը:

Չափումներ կատարել և միանիշ թվով բանավոր ու գրավոր բաղմապատկել: Պյութագորյան աղյուսակ:

Յերկնիշ թվերը բանավոր ու գրավոր բաժանել միանիշ թվի վրա:

Յերկնիշ թվով գրավոր բաղմապատկել:

Հարթաչափում. յերկնիշ թվի վրա գրավոր բաժանել:

Տասնորդական կոտորակների դումարումն ու հանումը:

Ուղիղ գծեր քաշել և ուղիղ անկյուններ կառուցել:

Ծավալի չափերը:

Տոկոս դնելը:

Մետրական չափերը մշակվում են ամբողջ դասընթացի ընթացքում:

Աշխարհագրական վարժույթների ծավալը

1. Ինչպես և պատկերացվում քարտեզի վրա ջուրը:

2. Ինչպես և պատկերացվում քարտեզի վրա քաղաքները, գետերն ու սահմանները:

3. Աշխարհի մասերը:

4. ԽՍՀՄ-ի վարչական քարտեզի վրա գտնել Հայաստանը, Անգրիկի միասին միացած հանրապետություններն իրենց ինքնավար շրջաններով ու ԽՍՀՄ-ի վեց անկախ հանրապետությունները:

5. Քարտեզի վրա գտնել Արեւմտյան Յեփրոպայի ամենախոշոր պետությունները:

6. Կիսազնդերի վրա գտնել ԽՍՀՄ-ն, Միության առանձին հանրապետությունները և կապիտալիստական ամենագլխավոր յերկրները—Անգլիան, Ամերիկան և այլն:

III ԾՐԱԴՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

I ՀԱՏՎԱԾ (31 պարագմում)

Անհրաժեշտ է բարձրացնել գյուղատնտեսության արտադրողականությունը:

I քեմա. Նոր կյանք ենք կառուցում (5 պարագմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Մինչև հեղափոխությունը հողը պատկանում էր կալվածատերերին: Խորհրդային իշխանությունը հողը հանձնեց գյուղացիներին ու հնարավորություն տվեց նրանց կառավարել պետությունը:

Խորհրդային իշխանության ողով գիտությունը մատչելի դարձավ գյուղացիներին. գիտությունը ոգնում է գյուղացուն բարձրացնել իր կյանքը:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

1—5 Լեզվի. Ծանոթություն գրքի անվան, հեղինակ, գին և այլն: Փոքրիկ հողվածի կարճ ասուլթի դանդաղ ընթերցանություն: Յուրաքանչյուր վանկի ու բառի պարզ առոգանություն:

Կարդացածի շուրջը մշակված հարցերի բանավոր պատասխաններ:

Մշակված կարճ խոսքերի արտադրություն: Գլխատառը գրության սկզբում և վերջակետից հետո:

Հաշվի. Յերկնիչ թվերը գրել ու կարդալ: Հոմեական թվանշանները գրել ու կարդալ: Հաշիվներ հարյուրավորի չըջանում ասանյակներով:

Աշխատանք քարտեզով. ՀՍԽՀ-ի և ԱՍՖՍՀ-ի քարտեզների վրա ցույց տալ ցամաքի, ջրի, լեռների, հարթության, քաղաքների, իր դավառի և դավառակի պայմանական գծագրությունը:

II քեմա. Հողագործությունը բարելավվում է:

1 յեմքաքեմա. Հողաշինարարություն ենք կատարում և անցնում սերմավորության (4 պարագմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Հողագործությունը և ցանքատնտեսությունը տվյալ վայրում: Լավ հիմքերի վրա դրած հողաշինարարությունը մի կողմից վերացնում է այն անհարմարությունները, վոր կապված են գյուղացու հողերի հետ ու ցրված լինելու հետ, մյուս կողմից՝ ավերացնում մշակելու համար պիտանի հողի քանակը:

Բաղմադաշտային տնտեսությունն ավելացնում է ցանքաի արածությունը, բարձրացնում հացի բերքը և մատակարարում անասուններին լավ տեսակի կեր:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

6—9 Լեզվի. Ծանոթություն «Մանկալ»-ին և մյուս թերթերին (անուն, թիվ, խմբագրության հասցեն և այլն): Կարճ ասուլթների դանդաղ ընթերցանություն նախորդ պարագմունքների որինակով: Կարդացածի շուրջը մշակված հարցերի բանավոր պատասխաններ: Մշակված կարճ հատվածների արտադրություն: Գլխատառը գրության սկզբում և վերջակետից հետո:

Հաշվի. Յերկնիչ և քառանիշ թվեր կարդալ ու գրել: Ամբողջի պարզ մասերը ($\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{8}$)

Աշխատանք քարտեզով. ՀՍԽՀ-ի և ԱՍՖՍՀ-ի քարտեզը—հարթությունների և լեռների պայմանական նշանները: Իր չըջանը: Հողագործական մոտակա դավառներն ու չըջանները:

2 յեմքաքեմա. Պարարտացրած հողն ու ընտրովի հացահատիկը բարձրացնում են բերքը (4 պարագմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Բույսն իր ծնունդն ստանում է ուղից և հողից: Պարարտացումը հարստացնում է հողն այն տարրերով, վորոնք անհրաժեշտ են տվյալ բույսերի համար: Տարբեր հողերը պահանջում են տարբեր պարարտացում: Հողը տվյալ վայրում: Խոշոր, ծանր և ընտրովի հացահատիկը բարձրացնում է բերքը (1 դեպյատինին մոտավորապես 10 փութ): Խորհրդային իշխանությունն աշխատում է մատակարարել թույլ տնտեսություններին ընտրովի հացահատիկ:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

10—13 Լեզվի. Կարճ ասուլթների դանդաղ ընթերցանություն: Թեմայի շուրջը մշակված հարցերի պատասխաններ: Մը

շակված կարճ հատվածների արտադրութիւն: Գլխատառը գրութեան սկզբում և վերջակետից հետո: Գլխատառը հատուկ անուններում:

Հաշվի. Ամբողջի հարյուրերորդական մասերը: Մասերի և տոկոսների համեմատութիւնը:

Աշխատանք քարտեզով. Հողագործական շրջանները:

III քեմա. Գյուղատնտեսական մյուս ճյուղերն եւ են զարգացում (5 պարագաք.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Գյուղատնտեսութեան մյուս ճյուղերը սովորւած վայրում: ՀՍԽՀ-ի և ԱՍՖՍՀ-ի գյուղատնտեսական հիմնական ճյուղերն են. յերկրագործութիւն, կենդանաբուծութիւն, գինեգործութիւն, տեխնիկական կուլտուրաների մշակում (բամբակ, մետաքս և այլն): Հայաստանի և Անդրկովկասի ամենազբաւոյր գյուղատնտեսական վայրերը: Կենդանաբուծութիւնը վերջին ժամանակներս զգալիորեն զարգացել է: Անասունների տեսակները հետզհետե ազնւանում են ու նրանց խնամելու վրա ավելի ուշադրութիւն է դարձվում: Տեխնիկական կուլտուրաների մշակումը (բամբակ, մետաքս և այլն) հետզհետե վերականգնում է ու դա անդրադառնում արդիւնաբերութեան զարգացման վրա:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

14—18 Լեզվի. Ցանկի ոգնութեամբ զաղափար կազմել դրբի բովանդակութեան մասին: Փոքրիկ հատվածների դանդաղ ընթերցանութիւն—վերջակետի վրա կանգ առնել ու ձայնն իջեցնել: Գլխատառը հատուկ անուններում: Արտագրել դրբից մշակված հատվածներ կամ ել գրատախտակից՝ կոլլեկտիվ կերպով կազմած ասույթներ՝ հատուկ անունները գրելով գլխատառ:

Հաշվի. Դրական և բացասական թվեր: Ժամանակի վերաբերյալ հաշիւներ:

Աշխատանք քարտեզով. Հայաստանի և Անդրկովկասի ամենազբաւոյր գյուղատնտեսական շրջանները:

IV քեմա. Խորհրդային տնտեսութիւնները, ցուցադրական դաշտերը և գյուղատնտեսական խմբակները ոգնում են մտցնել գյուղատնտեսութեան մեջ նոր ձեւեր (3 պարագաք.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Հիմնվելով իր շրջանի կոնկրետ որինակների և գրքում գետե-

ղած նյութերի վրա՝ քննել խորհրդային տնտեսութիւնների ու գյուղատնտեսական խմբակների աշխատանքը և պարզել այն ոգնութիւնը, վորը հասցնում են նրանք գյուղացու տնտեսութեանը:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Ցանկի ոգնութեամբ զառնել հարկավոր հոգնութիւն: 19—21 վածը: Փոքրիկ հատվածների դանդաղ ընթերցանութիւն: Առանձին բառերի պարզ առոգանութիւն: Կարգացածի բանավոր մշակումը (հարցեր և պատասխաններ): Անկետի հարցերը կոլլեկտիվ կերպով ձևավորել, ապա գրել առնել դրատախտակի վրա ու տետրում: Հատուկ անունները գրել գլխատառով:

Հաշվի. Ամեն մեծութեան բազմանիշ թվեր կարգաւ և գրել: Անցած, բայց թույլ յուրացրած բաժինների կրկնութիւն:

V քեմա. Կոոպերացիան այն գլխավոր ուղին է, վորը տանում է գյուղացու տնտեսութիւնը դեպի սոցիալիզմ:

1 յեմքարքեմա. Կոոպերացիան հնարավորութիւն է տալիս մեքենաներ ձեռք բերել (4 պարագաք.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Տվյալ վայրում գործադրվող գյուղատնտեսական գործիքն ու նրա տված ոգուտը: Հողի մշակման, ցանքի և բերքի հավաքման համար գոյութիւն ունեցող կարեւորագոյն գյուղատնտեսական մեքենաները: Գյուղատնտեսական մեքենաները հեշտացնում են աշխատանքը, բարձրացնում բերքը և տանում դեպի կոլլեկտիվ տնտեսութիւն: Մեքենաներ գնող ընկերութիւնները հնարավորութիւն են տալիս չբավարենելին և միջակներին գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերել: Մեքենաներ գնող ընկերութիւնների թիվը աստիճանաբար ավելանում է ու դրա հետ միասին աճում գյուղատնտեսական մեքենաների մատակարարումը գյուղին:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Լրագրի «ինչ կա այսօր համարում» վերնագրի 22—25 միջոցով ծանոթանալ նրա բովանդակութեանը: Փոքրիկ հոգնութիւնների դանդաղ և պարզ ընթերցանութիւն: Կարգացածի բանավոր մշակումը. կոլլեկտիվ կերպով ձևավորված ասույթները գրել առնել տետրերում (նախապես բացատրել ղեկավար բառերը): Անկետի հարցերի կոլլեկտիվ մշակումը: Դասի հարցական և բացա-

կանչական ասույթները գրել գրատախտակի վրա և արտագրել տետրերում: Նույնն անել և չեչտի վերաբերյալ:

Հաշվի. Շրջանաձև դիագրամ կարգավ ու կազմել: Նույնն ուղղանկյուն դիագրամի նկատմամբ:

Աշխատանք քարտեզով. Վորտեղից և ստանում Հայաստանը գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ:

2 յեկքաքեմա. Վարկային կոոպերացիայի փոխառությունն ոգնում և գյուղացուն բարձրացնելու իր տնտեսությունը (2 պարագրաֆ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Գյուղատնտեսական վարկային կոոպերացիան ոգնում և գյուղացուն վարկով և փոխառությունը՝ սերմ, անասուն, մեքենաներ և գյուղատնտեսական գործիքներ գնելու ու իր կարիքները բավարարելու, ու զբաղվելով ագրարում նրան կուլակի շահագործումից:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

26-27 Լեզվի. Ծանոթություն լրագրի բաժիններին: Փոքրիկ հոգվածների դանդաղ և պարզ ընթերցանություն: Կարգադրի կամ թեմայի շուրջը մշակած հարցերի պատասխաններ: Կուլեկտիվ կերպով հայտարարություն կազմել գրատախտակի վրա, ապա արտագրել: Ասույթի բառերը գրել իրար տակ գրատախտակի վրա, ապա տետրերում: Բառերը վանկատել բանավոր, ապա գրել՝ վանկերը գծիկներով բաժանելով: Գաղափար հնչյունի և գրի մասին: Գրել բառեր և ընդգծել ձայնավորները: Բառերի մեջ ջոկել բաղաձայնները:

Հաշվի. Տարածություն չափումը մասշտաբով: Գծել հոտակադի:

3 յեկքաքեմա. Կոոպերացիան բավարարում և ցյուղացու սպառողական կարիքները (1 պարագրաֆ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Սպառողական կոոպերացիան մատակարարում և գյուղին անհրաժեշտ ապրանքներ ու զբաղվելով հեռացնում ապրանքն արտագրողի և գնողի միջև գոյություն ունեցող մասնավոր միջնորդին:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

28 Լեզվի. Հոգվածի դանդաղ ընթերցանություն: Դասի բաժանողականության շուրջը մշակված հարցերի պատասխան: Կուլեկտիվ կերպով կազմել հայտարարություն: Կազմել ասույթներ, վորոնց մեջ լինի յերկձայնով բառեր: Յերկձայնով բառերը վանկատել բանավոր և գրավոր (սե-նյակ, Հա-րու-թյուն-յան):

Հաշվի. Մեծ թվերի գումարումն ու հանումը և այդ գործողությունների ստուգումը:

4 յեկքաքեմա. Կուլեկտիվ տնտեսություններն ու կոմունաները բարելավում են գյուղացու տնտեսությունը (3 պարագրաֆ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Ցրված ուժերով ու մենակ դժվար և բարձրացնել գյուղատնտեսությունը: Փոշիացած մանր տնտեսությունների միացումը կուլեկտիվներում և կոմունաներում կոգնի գյուղացիներին մտցնել տնտեսության նոր ձևեր, կրթարձրացնի նրանց կուլտուրական մակարդակը և կմոտեցնի գյուղացու տնտեսությունը սոցիալիզմին:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

29-31 Լեզվի. Հոգվածի դանդաղ ընթերցանություն: Կարճ բանավոր պատմվածք առորյա կյանքի շուրջը՝ սերտ կապված դասի թեմայի հետ: Թեմայի շուրջը մշակված հարցերի կուլեկտիվ կերպով ձևավորված պատասխաններն ինքնուրույն գրի առնել տետրերում (նախապես բացատրելով դժվար բառերը): Անցած նյութից արտագրել գրատախտակի վրա՝ այ, եյ, ույ, ոյ յերկձայնով բառեր, զբաղվել կազմել ասույթներ և գրել տետրերում:

Հաշվի. Մեծ թվերի գումարումն ու հանումը և այդ գործողությունների ստուգումը:

Աշխատանք քարտեզով. Գյուղատնտեսական կարևորագույն շրջանները:

II ՀԱՏՎԱԾ (21 պարագրաֆում)

Անհրաժեշտ և ամրացնել խոշոր արդյունաբերությունը, վորը սոցիալիզմի հիմքն է:

I քեմա. Նոր ֆարբիկներ և գափոգներ ենք կառուցում ու վերաապրքավորում հները:

1 յենքաքեմա. Գյուղը տալիս է քաղաքին սննդի և արդյունաբերութեան համար անհրաժեշտ մթերքներ և հում նյութեր (2 պարագամ.) :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Գյուղը տալիս է քաղաքին սննդի կարևորագույն մթերքներ և արդյունաբերութեան համար անհրաժեշտ հում նյութ (խաղող, բամբակ, կաշի, բուրդ) : Մեր արդյունաբերութեան հում նյութ մատակարարող գյուղատնտեսութեան ճյուղերի հետագա զարգացումը խորհրդային չինարարութեան անհետաձգելի խնդիրներից մեկն է :

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

32—33 Լեզվի. Հողվածի դանդաղ ընթերցանություն : Դասի թեմայի չուրջը մշակած հարցերի պատասխաններ : Անցած նյութից արտադրելի գրատախտակի վրա՝ յա, յու, յե, յո և յի յերկձայնով բառեր, դրանցից կազմել ասույթներ և գրել տետրերում :

Հաշվի. Գումարման և հանման ճիշտ ու կրճատ ձևերը : Մետրական չափեր :

Աշխատանք քարտեզով. Իր գավառը, հարևան գավառներն ու քաղաքները :

2 յենքաքեմա. Քաղաքը տալիս է գյուղին իր արդյունաբերության արտադրանքները (2 պարագամ.) :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Քաղաքի արդյունաբերությունը տալիս է գյուղին վերջինիս համար անհրաժեշտ բոլոր ապրանքները. չիթ, վոտնաման, գյուղատնտեսական մեքենաներ, պարարտացման քիմիական միջոցներ և այլն : Խորհրդային իշխանությունն ու Համկոմկուսը գլխավոր են մի շարք միջոցների, վեր գյուղը եժան դնելով ապրանք ստանա :

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

34—35 Լեզվի. Փոքրիկ հողվածի դանդաղ, սարգ և անսխալ ընթերցանություն : Դասի բովանդակության շուրջը մշակված հարցերի պատասխաններ : Թեմայի չուրջը մշակած հարցերի կոլլեկտիվ ձևավորած պատասխաններն ինքնուրույն կերպով գրել տանել :

Դժվար բառերի բացատրություն : Դասի հոգնակի բառերը արտադրելի գրատախտակի վրա, ընդգծել վերջավորությունները և կազմել հոգնակի բառերով ասույթներ :

Հաշվի. Գումարման և հանման ճիշտ ու կրճատ ձևերը : Մետրական չափեր :

Աշխատանք քարտեզով. Իր գավառը, մոտակա արդյունաբերական գավառներն ու քաղաքները :

3 յենքաքեմա. Մեր արդյունաբերության հիմքն են՝ մետաղն ու վառելիքը (5 պարագամ.) :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Մետաղարդյունաբերությունը գյուղատնտեսությանը տալիս է մեքենաներ և սարքավորում ֆաբրիկաները, գավոռներն ու փոխադրության միջոցները : Մետաղարդյունաբերության զարգացումն ամբողջ արդյունաբերության զարգացման հիմքն է : Արդյունաբերությանն անհրաժեշտ է վերոջ քանակի վառելիք : Մեր վառելիքի հիմնական տեսակներն են. ածուխ, նավթ, գալյո, սպիտակ ածուխ : Հալսաստանի, Անդրկովկասի և Միության բնական հարստություններն ապահովում են մեր արդյունաբերության զարգացումը : Բրածո հարստությունների վերածվելն արդյունաբերական ապրանքների կազմած և տեխնիկայի լայն կիրառման հետ (ցույց տալ՝ հիմնվելով գեղարվեստական նյութի վրա) : Ալյուրահվերդին, Ղաթարը, Ճիաթուրին, Ուրալը, Դոնբասը և Բազունհանքի և վառելիքի հիմնական չրջաններն են : Լենինգրադը, կենտրոնական չրջանը, Ուրալը և Դոնբասը արդյունաբերական այն գլխավոր կենտրոններն են, վորտեղ մետաղ է մշակվում :

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

36—40 Լեզվի. Ընթերցանություն նախորդ պարագամների ռինակով : Թեմայի չուրջը մշակած հարցերի կոլլեկտիվ ձևավորած պատասխաններն ինքնուրույն կերպով գրել տանել (նախապես բացատրել դժվար բառերը) : Դասական թվականներով (առաջինից մինչև 10-րդ) ասույթներ կազմել, գրատախտակի վրա գրել, ապա արտադրել տետրերում :

Հաշվի. Ձախումներ կատարել և միանել թվով բանավոր ու գրավոր բազմապատկել : Պյութագորասի աղյուսակ : Մետրական չափեր :

Աշխատանք քարտեզով. Ղաթար, Ալլահվերդի, Ճիաթուրի, Ռաբալ, Դոնրաս, Բագու, կենտրոնական շրջան, Լենինգրադ:

4 յեմքաքեմա. Նոր Փարբիկներ և զավոդներ ենք կառուցում ու վերասարքավորում հները (5 պարապմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Արդյունաբերական ապրանքների պահանջը աճում է՝ մանավանդ զյուզում: Արդյունաբերական ապրանքների զգալի մասը, առաջին հերթին մեքենաները, ստացվում էլին արտասահմանից: Կառուցում ենք նոր Փարբիկներ և զավոդներ ու վերասարքավորում հները, վոր աղատվենք այդ կախումից և ինքներս արտադրենք մեզ պակասող ապրանքները: Խոշոր Փարբիկներին և զավոդներին կառուցումը պահանջում է մեզինից ծայրահեղ խնայողություն: Արդյունաբերություն զարգացումը և տեխնիկայի բարելավումը հնարավորություն կտա ավելացնել ապրանքների քանակը, բարձրացնել նրանց վորակին ու իջնցնել գները:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

41—45 Լեզվի. Ընթերցանություն նախորդ պարապմունքների որինակով: Թեմայի շուրջը մշակած հարցերի կուլեկտիվ ձևավորած պատասխաններն ինքնուրույն կերպով գրի առնել: Մշակված, բայց թույլ յուրացրած ուղղադրական վարժույթների կրկնություն (տվյալ բառից կարճ ասույթներ կաղմել, դրքից արտագրել համապատասխան հատվածներ): Անցած դասերից արտագրել, գրատախտակի վրա և ապա տետրերում «աց» և «ած» վերջավորություններ բառերով ասույթներ՝ ընդգծելով վերջավորությունները:

Հաշվի. Չափումներ կատարել և միանիշ թվով բանավոր ու գրավոր բաղմապատկել: Պյութագորյան աղյուսակ: Մետրական չափեր:

Աշխատանք քարտեզով. Արդյունաբերական շրջանները: Ալլահ, Գերմանիա:

5 յեմքաքեմա. Ելեկտրոֆիկացիան բարձրացնում է թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը (3 պարապմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Յերկրի ելեկտրոֆիկացիան հնարավորություն է տալիս ոգաագործել բնության ձրի ուժերը (Թափող ջրի ուժը) և վառելիքի

հասարակ տեսակները (տորֆ, ցածր վորակի քարածուխ): Ելեկտրոֆիկացիան կրճատում է արդյունաբերություն ծախսերը և նրա պատում նրա զարգացման: Ելեկտրականությունը հարկավոր է ոգաագործել և գյուզում: Հայաստանում, Անդրկովկասում և Միուսթյան մեջ մշակված է ելեկտրոֆիկացիայի սխտեմատիկ պլան: Ըստ այդ պլանի արդեն կառուցված են մի շարք խոշոր ելեկտրակայաներ. Ռիկովի անվան հիդրոշեն (Յերևան), Չորագես, Չագես, Վալսովի հիդրոշեն և այլն:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

46—48 Լեզվի. Փոքրիկ հոգվածների արտահայտիչ ընթերցում: Թեմայի շուրջը մշակված հարցերի պատասխաններ: Կուլեկտիվ մշակած պատասխաններն ինքնուրույն կերպով գրի առնել՝ նախապես պարզաբանելով դժվար բառերը: Կուլեկտիվ յեղանակով կաղմել ասույթներ «աց» և «ած» վերջավորություն ունեցող բառերով և արտագրել տետրերում:

Հաշվի. Յերկրի թվերը բանավոր ու գրավոր բաժանել միանիշ թվի վրա:

Աշխատանք քարտեզով. Արդյունաբերական շրջանները. վառելիքի շրջանները. ամենազլխավոր գետերը:

II քեմա. Արհմիությունները կոմունիզմի դպրոցն են:

1 յեմքաքեմա. Բանվորի աշխատանքը ծանր է արտադրություն պրոցեսում (1 պարապմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Արդի Փարբիկներում և զավոդներում բանվորներն աշխատում են միասակար պայմաններում. փոշով լի, թունավոր ոգ, խլացուցիչ աղմուկ (մանածագործները), շլացուցիչ լույս և տաք (մետաղագործները). պայթում, փլուզում, հեղեղ (հանքագործները): Ցույց տալ՝ հիմնվելով գեղարվեստական նյութի վրա:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

49 Լեզվի. Գեղարվեստական հատվածի արտահայտիչ ընթերցում: Կարդացածի բանավոր մշակում: Կործ բանավոր պատմվածք դասի թեմայի շուրջը: Թեմայի շուրջը մշակած հարցերին ինքնուրույն կերպով պատասխանել ու պատասխանները գրի առնել (նախապես պարզաբանել դժվար բառերը):

Հաշվի. Յերկնիչ թվերը բանավոր ու գրավոր բաժանել միասին թվի վրա:

2 յեմքաքեմա. Արճիությունները պաշտպանում են բանավորի աշխատանքը, նպաստում, վոր մասաները մասնակցեն սոցիալիստական շինարարության և աջակցում արդյունաբերության բարձրացման (3 պարապմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Արճիությունները հսկում են, վոր արտադրության ընթացքում առողջապահության պահանջներն իրագործվեն ու բանվորական ժամանակի նորմաներն ի կատար ածվեն: Արճիություններն իրենց անդամների մեջ կույտ-կրթական աշխատանք են տանում ու նպաստում, վոր նրանք մասնակցեն կոոպերացիայի և ուրիշ հասարակական կազմակերպությունների աշխատանքին: Արտադրական խորհրդակցությունների միջոցով արճիություններն ոգնում են արդյունաբերության կարգավորման և բարձրացման:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Փոքրիկ հողվածների արտահայտիչ ընթերցում: 50—52 Կարդացածի բանավոր մշակումը: Թեմայի շուրջը մշակված հարցերին ինքնուրույն կերպով պատասխանել ու պատասխանները գրել առնել (նախապես պարզաբանել ղեկավար բառերը): Մշակված, բայց թույլ յուրացրած ուղղադրական վարժույթների կրկնություն:

Հաշվի. Յերկնիչ թվով գրավոր բազմաթիվ: Անցած, բայց թույլ յուրացրած բաժինների կրկնություն:

III ՀԱՏՎԱԾ (22 պարապմունք)

Անհրաժեշտ է ամրացնել խորհրդային իշխանութունը, վորը գյուղացիական մասսաների ղեկավար բանվոր դասակարգի իշխանութունն է:

I քեմա. Տեղական խորհուրդներն իրագործում են սոցիալիստական շինարարության խնդիրները (8 պարապմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Տեղական խորհրդի աշխատանքը: Ամեն կերպ պետք է նպաստել, վոր աշխատավորության լայն մասաները մասնակցեն խոր-

հրդի աշխատանքին: Խորհուրդը մտածում և առողջապահության, լուսավորության, բարեկեցության, հողային հարցերի, սուրբերի հավաքման մասին և այլն: Խորհուրդները մտածում են բժշկական ոգնության ուժեղացման, տվյալ վայրի առողջացման և առողջապահական գիտելիքները տարածելու մասին: Վարակիչ հիվանդությունների տարածման գլխավոր պատճառն այն է, վոր առողջապահության պահանջները չեն պահպանվում, դիմում են հեքիմներին, տատմաններին և այլն: Խորհուրդները յերեսաների և պատանիների համար դպրոցներ են կառուցում, մեծահասակների համար—խրճիթ-ընթերցարաններ և կարմիր անկյուններ: Ներկայումս մտցնում են ընդհանուր կրթություն: Խորհուրդները մտածում են հողաշինարարության մասին, ճանապարհներ են կառուցում, տեղական նշանակություն ունեցող անտառները բաշխում և այլն: Այս ամենն իրագործելու համար խորհուրդը պետք է միջոցներ ունենա: Գյուղացիներից հավաքվում է գյուղատնտեսական հարկ: Խորհրդային իշխանությունը թույլ տնտեսություն ունեցող գյուղացիների հարկը պակասեցնում է: Չբավորների մի մասը բոլորովին ազատվում է հարկից:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Գեղարվեստական հատվածների արտահայտիչ 53—60 ընթերցում: Կարդացածի բանավոր մշակում: Շրջապատից վերցրած բանավոր պատմվածքներ դասի թեմայի շուրջը: Ուսուցչի հարցերի հիման վրա կարճ պատմվածքներ կազմել դասի թեմայի շուրջն ու գրել առնել: Հայտարարություններ գյուղխորհրդին: Անցած դասերից արտագրել ոժանդակ բայեր ունեցող ստույթներ՝ ընդգծելով ոժանդակ բայերը:

Հաշվի. Յերկնիչ թվով գրավոր բազմապատկել: Անցած, բայց թույլ յուրացրած բաժինների կրկնություն:

Աշխատանք քարտեզով. ՀՍԽՀ-ի, ԱՍՖԽՀ-ի և ԽՍՀՄ-ի սահմանները:

II քեմա. Խորհրդային իշխանության կառուցվածքը հնարավորություն է տալիս աշխատավորներին մասնակցել պետական գործերին (6 պարապմ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Ընտրելու և ընտրվելու իրավունքը պատկանում է սկսած 18 տարեկանից այն աշխատավորներին, վորոնք չեն չահագործում

աւելի աշխատանքը: Գյուղխորհրդից սկսած մինչև գավգործկոմ-
 մը՝ բոլորն ել ներկայացուցիչներ են ուղարկում խորհուրդների
 համագումարներին, վոր և ապահովում և աշխատավորութեան
 լիակատար մասնակցութեանը պետական գործերին: Չքաղութնե-
 րի և միջակների Կոմիտեի ղեկավարութեամբ մասնակցութեանը
 խորհուրդների աշխատանքին ամրացնում և խորհրդային իշխա-
 նութեանը: Իշխանութեան բարձրագույն որդանը ՀՍԽՀ-ում՝ խոր-
 հուրդների համահայաստանյան համագումարն է, ԱՍՖԽՀ-ում՝
 խորհուրդների անդրկովկասյան համագումարը, ԽՍՀՄ-ում՝
 խորհուրդների համամիութենական համագումարը: Համագու-
 մարների միջոցներում իշխանութեան բարձրագույն որդանը հա-
 մապատասխան Կենտրոնական և Կենտրոնական իր կողմից նշա-
 նակում և ժողովրդական Կոմիտեների խորհուրդ և առանձին ժող-
 կոմատներ: Կենտրոնական իշխանութեանը հաշվի յե առնում տե-
 ղերի կարիքներն ու պահանջները և սոցիալիստական շինարա-
 րութեան խնդիրները ու այդ հիման վրա՝ հրատարակում իր որոշ-
 անքը և վորոշումները:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Փոքրիկ հատվածների արտահայտիչ ընթեր-
 ցում: Կարգացածի բանավոր մշակում: Բացատրել
 կրճատ բառերը ու լրիվ գրի առնել. Գավգործկոմ, Կենտրոնական,
 ժողկոմխորհ: Կոլլեկտիվ յեղանակով ոժանդակ բայեր ունեցող
 ասույթներ կազմել և արտադրել տետրերում:

Հաշվի. Հարթաչափում. յերկնիչ թվի վրա գրավոր բա-
 ժանել: Կրկնութեան թույլ յուրացրած բաժինների:

Աշխատանքի քարտեզով. Հայաստանի, Վրաստանի, Ադերբե-
 յանի, Անդրկովկասի և Միութեան սահմանները:

III քեմա. Խորհրդային իշխանութեանը միացնում և զա-
 նազան ազգութեանների աշխատավորներին մի յեղարայրական
 միութեան մեջ:

1 յեքսքսքեմա. Խորհրդային Միութեան մեջ բոլոր ազ-
 ցութեանները հավասար իրավունքներ ունեն (5 պա-
 րագր.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Խորհրդային յերկրում ապրում են զանազան ազգութեաններ,
 Թագավորի ժամանակ բոլոր վոչ ոռւս ազգութեաններն ամեն կերպ

հնչվում էին. մայրենի լեզվով սովորելն արգելվում էր, մի ժո-
 դովուրդ գրգովում էր մյուսի դեմ և այլն: Խորհրդային իշխա-
 նութեանը հավասարեցրել և բոլոր ազգութեանների իրավունք-
 ները՝ հնարավորութեան տալով ամեն մի ժողովուրդի զարգաց-
 նել իր տնտեսութեանը, մայրենի լեզվով զարգանալ
 և այլն: Հետամնաց ժողովուրդների կուլտուրական մակարդակի
 բարձրացումը նպաստում և կենցաղի վերակառուցման և կանանց
 ազատագրման:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Գեղարվեստական հատվածների արտահայտիչ
 67—71 ընթերցում: Չրուցից կամ կարգացածից կոլլեկտիվ
 կերպով յեղարկացութեաններ անել ու ինքնուրույն գրի առնել:
 Դիտել թվարկման ինտոնացիան և գտնել ստորակետի տեղը:

Հաշվի. Հարթաչափում. յերկնիչ թվի վրա գրավոր բաժա-
 նել:

Աշխատանքի քարտեզով. Վորտեղ են ապրում զանազան ազ-
 ցութեանները:

2 յեքսքսքեմա. Անդրկովկասը կազմված և յերեք անկախ
 հանրապետութեանից, վորոնց մեջ մտնում են հինգ
 ինքնավար շրջան: Խորհրդային Միութեանը կազմված
 և վեց անկախ հանրապետութեանից (5 պարագր.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Խորհրդային իշխանութեանը հնարավորութեան և տվել ա-
 ռանձին ազգութեաններին կազմել ինքնուրույն հանրապետու-
 թեաններ: Իրենց աշխատանքն ալելի արդյունավետ դարձնելու
 համար, Անդրկովկասի յերեք անկախ հանրապետութեանները—
 ՀՍԽՀ-ն, ՎՍԽՀ-ն և ԱՍԽՀ-ն միացել են ու կազմել ԱՍՖԽՀ-ն,
 Իսկ ԱՍՖԽՀ-ն, ՌՍՖԽՀ-ն, ՈւՍՖԽՀ-ն, Ուզբ. ՍԽՀ-ն, Թուրքմ.
 ՍԽՀ-ն ու ԲՍԽՀ-ն դա՛իւնք են կապել ու կազմել ԽՍՀՄ-ն:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

Լեզվի. Նախորդ պարագրամներին որինակով կար-
 72 74 դացածի բանավոր մշակում: Բացատրել կրճատ բա-
 ռերն ու գրի առնել. ՀՍԽՀ, ՎՍԽՀ, ԱՍԽՀ, ԱՍՖԽՀ, ՌՍՖԽՀ և
 ԽՍՀՄ:

Հաշվի. Տասնորդական կոտորակները գումարումն ու համար:

Աշխատանք քարտեզով. ԱՍՖԽՀ-ի և ԽՍՀՄ-ի սահմանները:

IV ՀԱՏՎԱԾ (22 պարագրաֆ)

Անհրաժեշտ է ամրացնել Խորհրդային Միությանը, վարք ամբողջ աշխարհի աշխատավորների հեկարանն է:

I քեմա. ԽՍՀՄ-ն աշխատավորների միակ հանրապետությունն է ամբողջ աշխարհում:

1 յեմքաքեմա. Բուրժուական ամենազլխավոր յերկիրներում արդյունաբերությունը խիստ զարգացած է (3 պարագրաֆ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Բուրժուական ամենազլխավոր յերկիրներն են. Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան: Արդյունաբերության և գյուղատնտեսական զարգացման առեականից համաշխարհային տնտեսության մեջ առաջին տեղը զբաղում են Միացյալ Նահանգները: Յեվրոպայի ամենաարդյունաբերական յերկիրներն են Անգլիան և Գերմանիան: Անգլիայում արդյունաբերությունը խիստ զարգացած է: Անգլիան ունի խոշոր առևտրական նավատորմի: Կապիտալիստական յերկիրներն անդադար պայքարում են իրար դեմ սպառման չուկաների, հում նյութի աղբյուրների և գաղութների համար:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

75—77 Լեզվի. Բառարանից ոգտվելու հմտություն: Գեղարվեստական հատվածների արտահայտիչ ընթերցում: Դասի թեմայի չուրջը մշակված հարցերի ինքնուրույն պատասխաններ: Կազմել ասույթներ թվարկվող բառերով, գրել տեքստերում և զնել ստորակետերը:

Հաշվի. Տասնորդական կոտորակների գումարումն ու համար: Կրկնություն:

Աշխատանք քարտեզով. Բուրժուական ամենազլխավոր յերկիրները:

2 յեմքաքեմա. Բուրժուական յերկիրներում իշխանությունը գտնվում է կապիտալիստների և կալվածատերերի ձեռքում (5 պարագրաֆ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Բուրժուական յերկիրներում իշխանությունը պատկանում է փոքր աշխատավորներին, ինչպես մեր Միության մեջ, այլ կապիտալիստներին: Բոլոր Ֆարիկաները, զավուները, հողերը և գեանի խորքերը առանձին անհատների մասնավոր սեփականություն են: Աշխատավորների գրությունը կապիտալիստական յերկիրներում ծանր է. գործազրկությունն աճում է. կապիտալիստներն օգտվում են գրանից ու ավելի ևս շահագործում և ճնշում աշխատավորներին:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

78—80 Լեզվի. Գեղարվեստական հատվածների արտահայտիչ ընթերցում: Բառարանից ոգտվելու հմտություն: Զուգացից կամ կարգացածից յեղրակացություններ անել ու յեղրակացությունները գրել առնել: Դիտել ասույթի ինտոնացիան (ձայնի բարձրացումը և իջնումը) և գտնել ստորակետի տեղը (ձայնի բարձրացման կետում):

Հաշվի. Ուղիղ գծեր քաշել և ուղիղ անկյուններ կառուցել: Կրկնություն:

Աշխատանք քարտեզով. Բուրժուական ամենազլխավոր յերկիրները:

3 յեմքաքեմա. Բուրժուական յերկիրներն ամենազախան կերպով շահագործում են ու ճնշում իրենց գաղութների ազգաբնակչությունը (3 պարագրաֆ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Բուրժուական յերկիրները խոշոր գաղութների տեր են, ինչպես որինակ Անգլիան: Կապիտալիստական յերկիրների համար գաղութները հում նույթի աղբյուր են և ապրանքների սպառման չուկա: Գաղութների ազգաբնակչությունն ամենազախան կերպով շահագործվում է ու ճնշվում: Այս հանգամանքն առաջացնում է անբավականություն և զայրույթ, վորը և վերածվում է հեղափոխական շարժման: Զինատանը կիսագաղութային յերկիրն է: Զին ժողովուրդը հեղափոխական պայքար է մղում կապիտալիստական յերկիրների դեմ՝ նրանցից ազատագրվելու նպատակով:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ.

81—83 Լեզվի. Գեղարվեստական հատվածների արտահայտիչ ընթերցում: Զուգացից կամ կարգացածից յեղրակացու-

Թխուհներ անել ու յեզրակացու թխուհներն ինքնուրույն կերպով գրել
առնել: Մշակված, բայց թույլ յուրացրած ուղղագրական վար-
ժույթների կրկնութիւն:

Ժողովների կրկնաթիվում:
 2. սղլի. Եւթալի չափերը: Թույլ յուրացրած բաժինների հոս-
 կնութիւնն:

Այնպես լինի՝ հարկերը մեծացնենք։

Կրկնեց զաղոթսնիրը :

4 ԵՆՆԻՔԱՐԵՄԱ. ԲՈՒՐԺՈՒԿԱՆ յԵՐԿՐՆՆԵՐԸ ԽՈՂՄ-Ի ՆԴ-
ԿԱՄԱՄԲ ԹՆՆԱՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԷՆ ՎԱՐՈՒՄ
(3 սլաքապմ.) :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .

Բոլոր յերկիրներէ կապիտալիստները թշնամարար են վերաբերում իմ ՆՄ-ին, վորովհետեւ վախենում են նրա սրինակից (վախենում են, վոր իրենց մոտ ել հեղափոխություն կատարվի)։ Մենք աշխատում ենք կապիտալիստական յերկիրներէ հետ խաղաղ արնտեսական հարաբերություններ զարգացնել։ Սակայն, դա միայն մեզնից չի կախում ու գինված հարձակման վտանգը տակաւին մեզնից չի կախում ու հետապնդել մեզ։ Մեզ միշտ ել սպառնում է կապիտալիստական յերկիրներէ հարձակումը։ Կապիտալիստները վործում են ոգտագործել մեր հարեան պետությունները (Լեհաստան, Լատվիա, Ռումանիա) մեզ վրա հարձակվելու համար։ Պարսկաստանն ու Տաճկաստանը մեզ հետ բարեկամական հարաբերության մեջ են։

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ .

84 86 Լեզվի. Գեղարվեստական սկսած քննրի արտահայտիչ ընթերցում: Կարողացածից յեղրակացություններ առնել ու յեղրակացություններն ինքնուրույն կերպով գրի առնել: Մըշակված, բայց թույլ յուրացրած ուղղադրական վարժութիւններ կրկնություն:

Աշխատակի քարտեզով. ՀՍԽՀ-ի սահմանները. հարևան պետությունները (Պարսկաստան և Տաճկաստան): ԽՍՀՄ-ի սահմանները. հարևան պետությունները:

5 յեկեաքեմա. Արտաքին առևտրի մենաշնորհը սոցիալա-
լիստական շինարարութեան հիմքերից մեկն է (2 պարագր.) :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .

Կապիտալիստական յերկրները շահագրգռված են ոգտագործելու ԽՍՀՄ-ն, իրրե սպառման շուկա: Արտադրին առևտրի ժեհտ-նորհը հնարավորություն է տալիս կարգավորել ԽՍՀՄ-ի տնտեսու-կան փոխհարաբերությունները ուրիշ յերկրներրի հետ և իրագործել մեր տնտեսության փերաբերող պլանը:

ՎԱՐԺՈՒՅԹՆԵՐ .

87 88 Լեզվի. Կարդալ ու գրել նախորդ պարագմունքի որինա-
կով: Կազմել ասույթներ, գիտել ձայնի բարձրացման
կետերը և արտագրելիս դնել ստորակետ:

Հաշվի. Տոկոս գտնելը: Թույլ յուրացրած բաժինների կրկնու-
թյուն:

Աշխատանքի փարտեզով. Քարտեզի վրա ցույց տալ այն բուր-
ժուական յերկիրները, վորոնց հետ ՈՍՀՄ-ն առևտրական հարա-
բերություններ է մեծ ե :

II քեմա. Կարմիր բանակը Միության պահակն է (5 պարսպապատ) :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .

Կարմիր բանակը մեզ անհրաժեշտ է Միությունը զանազան հար-
ձակումներից պաշտպանելու համար: Կարմիր բանակն աշխատավու-
րական բանակ է. թե չարքային կարմիր բանակայինը և թե հրամ-
կազմը—բանվորներ են ու զլուզացիներ: Մեկ Կարմիր բանակն ու-
նի մշտական և յերկրային մասեր: Յերկրային մասերը հնարավու-
րություն են տալիս գինեակոչվածին չկտրվել իր աշխատանքից և
միևնույն ժամանակ կրճատում են այն ծախսերը, վորոնք կապված
են մշտական բանակ պահելու հետ: Կարմիր բանակի ուժը նրա կադ-
մակերպությունն է, դասակարգային կազմը և քաղաքական պատ-
րաստականությունը: Զորացրված կարմիր բանակայինը՝ վերա-
դառնալով դյուղ, ողնում է աեզական կազմակերպություններին
իրադրոծել խորհրդային իշխանության բոլոր առաջադրություն-
ները. աշխատում է խորհուրդներում, կոոպերացիայում, խրճիթ-
ինթերգարանում և այլն:

ՀԱՐԺՈՒՅԹՆԵՐ .

89 93 Լեզվի. Գեղարվեստական հատվածների արտահայտիչ
ընթերցում: Ինքնուրույն կերպով գրել կարճ հայտարար-
բուխյուն կամ թեմայի շուրջը նամակ:

Հաշվի. Բոլոր գործողությունների և ձեռք բերած մասնամաս-
տիական վարժույթների կրկնություն:

Աշխատանք քարտեզով. ԽՍՀՄ-ի սահմանները, բուրժուական
ամենագլխավոր յերկիրները, հարևան պետությունները:

III քեմա. ԽՍՀՄ-ն ամբողջ աշխարհի աշխատավորների հենա-
բանն է (3 պարագափ.):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Բուրժուական բոլոր յերկիրների բանավորներն ու գյուղացիները
համակրում են Խորհրդային Միությանը, վորովհետև նա աշխար-
հիս միակ պրոլետարական պետությունն է և բոլոր աշխատավոր-
ների պաշտպանը: Աշխատավորների ճնշված դրությունը
բուրժուական յերկիրներում զարկ է տալիս հեղափոխա-
կան շարժումների աճմանը: Կոմիստերնը միացնում է
բոլոր յերկիրների կոմունիստական կուսակցությունները ու գե-
կավարում աշխատավորների հեղափոխական պայքարը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԵՐ.

94—96 Լեզվի. Արտահայտիչ ընթերցում (լրագրում գտնել հոդ-
վածներ թեմայի շուրջը): Թեմայից ստացված յեզրա-
կացություններն ինքնուրույն կերպով գրի առնել:

Հաշվի. Բոլոր գործողությունների և ձեռք բերած մասնամաստի-
կական վարժույթների կրկնություն:

Աշխատանք քարտեզով. Յուրյ տալ այն յերկիրները, վորոնք
ուղարկել են ԽՍՀՄ բանվորական պատգամավորություններ: Յուրյ
տալ հեղափոխությամբ բռնկված յերկիրները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՂ

I. Բացատրական	3
II. Ծրագիր. Հաջորդաբար մշակվող թեմաները	14
Մշակվող վարժույթների ծավալն ու հաջորդականությունը	17
III. Ծրագրային նյութի բաշխումն ըստ թե- մաների և պարագմունքների	20



13. Կոմունարուքյուն «Կորչի անգր.» ընկերության հրատ. 1927 թ. 16 էջ, գինը 5 կ.
14. Ա. Ռեվագով, Պ. Քուշմանյան, Հ. Խեչումյան—Կարմիր մարտիկի այբբենարան (Քաղբաժնի հրատարակություն. մինչգիւնակոչայինների լիկկայանների համար) հրատ. 1927 թ. 96 էջ. —

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

1. Արով—Յես Բու հունարին մեռնեմ, Մելիքեք ջան,
2. » —Գուրգենանց պառավն ել կոմունիստ ա, Խմբապետը (մի գրքով)
3. Ակսել Բակունց—Տրախտորի մաշին, Արտեիլա, Թանգին և Ծատուն տղան (մի գրքով)
4. Ան. վարդանյան—Գործադուլ. Բ. հրատ.
5. Ջավախիշվիլի—Անմեղ Արդուլը
6. Գ. Սարյան—Կոմունայի ջաղացը և Դյուզբյանդին
7. Աբախ—Նարգո
8. Անուշ—Համալորուհին
9. Անհաջ—Փոխադր. Գ. Գաբրիելյանի

ԳԻՆԸ 15 ԿՈՂ.

1
9

377

6a

ՀՀ Ազգային գրադարան



NL0239132

53. 744